



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Երկրորդ Տարի	Յուլուար 28/10 Փետր.	Թիւ 29
--------------	----------------------	--------

ԹՈՒՂԹ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

ՊԻՌԱ Ժ.Ի

Ա.Ռ. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՍ

«Կաթողիկէ Արձագանգ» իր առաջին չորսնը բոլորած ըլլալով, Երկրորդ Տարին կը սկսի հրատարակուիլ ի Կ. Պոլիս: Փոխադրութեան և սկզբնաւորութեան առաջին դժուարութեան բերումը ամսոյ մը չափ հարկադրուեցաւ ընդհատուիլ: Ներողամիտ պիտի գտնուին անշուշտ պատուարժան ընթերցողները: Թերթս, հաւատարիմ իւր կոչման և սկզբունքներուն, անվիհեր պիտի արձագանգէ Կաթողիկէ ճշմարտութիւններն ի Հայս:

մինչոյն զւղղութեամբ, ինչպէս իւր անդրանիկ ծրագրին մէջ ուրուագր-
ծած էր: Հիմա, Քահանայապետական Օրհնութեամբ զօրացած, և Առա-
ւաքեւապետին Ս. Շիրմին այցելութենէն սրտապնդուած, իր այս առա-
ջին թիւովն Նոր տարին կը շնորհաւորէ և երջանկութիւն կը մաղթէ իւր
Պատ. Ընթերցողներուն, և անպատում կերպով ուրախ է որ Ա. Թուոյն
ճակատը կը դրոշմէ Սրբ. Քահանայապետին Պիոսի Ժ.ի սքանչելի թուղ-
թըն առ մեզ ուղղեալ, որ Պատմութեան մէջ պիտի մնայ անմահական Յի-
շատակարան մը: Իսկ մեր արդի կացութեան բերմամբ նշանակութիւնը
ա՛յ աւելի նուիրական է. քանզի Ս. Եկեղեցւոյ զաւակներուն ցանկալի
խաղաղութիւնը կրնան պարգեւել միայն անոր գլխոյն գերիմաստ և ազ-
գեցիկ խօսքերը:

Այս անվուգական թղթովը ցոյց տուած է Քահանայապետը թէ
ո՛րպիսի գութ և խնամք կը տածէ մեր փոքրիկ հասարակութեան, նման
այն մեծագործ Քահանայապետներու որոնք այնքան գուրգուրացին մեր
ազգին վրայ և իրենց հայրագործով և ազնուաւատ բարերարութեամբ օժ-
տեցին, որոնցմէ ոմանց անմոռանալի անունները կը յիշատակէ: Անոնց
շաւղաց հետեւելով, Պիոս Ժ. առնապէս և հոյակապ ազգ և ցեղ կ'ան-
ուանէ Հայերս, որոնք աստուածատուր ընտիր ընտիր ձիրքերէն զատ, իրր
մին պատմական ամենահին ազգերէն կրնան պարծիլ իրաւամբ: Եւ կը
յայտնէ առաջի ամբողջ աշխարհի թէ անպատմելի ցնծութեամբ և անծայ-
րածիր խանդաղատանօք ողջագութեան ի Հռոմ՝ Հայ-Կաթողիկէ Պատրիար-
քը «Որուն բազմաթիւ առաքինութիւնները, և հաւատոյ յոյժ անկեղծա-
գոյն սէրը ծանօթ են» իրեն, ինչպէս նաև Հռոմի մէջ ի Սինոդոս գումար-
ուած Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան Եպիսկոպոսները. որովհետեւ
զանոնք իւր Առաքելական կրօնք վրայ սեղմելով, կը նկատէ նա սիրա-
զեղ գրկել իւր ամէն հայ Կաթողիկեայ սիրելի որդիները, զորոնք կը
սկսի հայրաբար խրատել: Ամէնէն առաջ պէտք է փարին Ս. հաւատքի
որով կը պաշտենք զԱստուած, անդրդուելի Յուսով և անպայման Սիրով:
Այս Հաւատքն է որ պահեց, պատուեց և գիւցադնացուց Հոյ ազգը: Այն
պիտի պահէ զինքը միացած Ս. Կաթողիկէ Եկեղեցւոյ:

Իսկ Հաւատոյ առաջին գործն է հնազանդութիւնն Առաջնորդաց,
որոնց ի պահպանութիւն յանձնուած է այս երկնաւոր գանձը, որ պէտք
է պահուի Բ. և առնապէս: Այս հնազանդութիւնը նախ և առաջ կը պար-
տինք Ս. Աթոռոյ, որ հիմն է անսասան, վէմ հաւատոյ և վարդապետ
Տիեզերաց: Ապա և կը պարտինք հպատակութիւն մեր Կ. Պատրիարքին
ու Եպիսկոպոսներուն. պէտք է ընդունինք զանոնք իբրեւ Աստուծոյ հրեշ-
տակներ, ինչպէս ըսած է Պօղոս Առաքելաւ առ Գաղատացիս. վստահ
այն ճշմարտութիւնները զորս մեզի պիտի քարոզեն և առ Քրիստոս
պիտի առաջնորդեն, առած են անոնք Հռոմէն, բուն իսկ ճշմարտութեան
ապրիւրէն. որով «Պէտք է հնազանդելով խոնարհիլ անոնց առջև որոնք

մեր հոգիներուն առաջնորդներն են, և դադրիլ վայրապար երկպառակութենէ»։ վասն զի «Որոնք որ Աստուծոյ և Յիսուս Քրիստոսի են, անոնք Եպիսկոպոսին հետ են»։

Մատնանիչ կ'ընէ նաև Սրբ. Հայրն թէ հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը փառաւոր և ազնուագոյն բան է. բայց միացած պէտք է ըլլայ ճշմարիտ կրօնասիրութեան հետ. զի մէկ մի բան ներկի է Քրիստոսէն աւելի սիրել։

Հօր մը փութկոտութեամբ կ'ապսպրէ սէր եղբայրական, նշան Քրիստոսի ճշմարիտ աշակերտներուն, անյիշահարութեամբ, ամենայն բարերարութեամբ։ Նոյնպէս պէտք է սիրենք և աղօթենք մեր ազգակից եղբարց համար, որ դան ի միութիւն Հօտին Քրիստոսի, որոնց պարտական ենք տալ ամէն տեսակ բարի օրինակ։

Այս ամէն առաքինութեանց հայելի պէտք է հանդիսանան մանաւանդ քահանայք, որոնք մեծագոյն պարտականութիւն ունին հնազանդելու իրենց Առաջնորդաց և զարդարուիլ ամէն տեսակ առաքինութիւններով։


Այսքան մեծամեծ բարեաց յաջողութեան համար, Ս. Քահանայապետը կը խնդրէ աստուածային շնորհքը, և Հայ ազգին առանձինն սիրով փառաբանած Ս. Կուսին օգնութիւնը, և իւր Սիրեցեալ Որդեկաց կը շնորհէ Առաքելական Օրհնութիւնը։

Երանի՛ թէ մէն մի հայ Կաթողիկէի սրտին մէջ անջնջկի դրոշմուէր այս հայրագործը և հիանալի քահանայապետական թուղթը։





ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒՅՑ
ՊԵՊՍԹ. ՔԱԼԱՆԱՅԱՊԵՅ
ՍԻՆԵՑԵԱԼ ՈՐԴԵԿԱՑ
ՈՂՋՈՅՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ



Աւելորդ է ծանուցանել թէ ո՞րչափ ցնծալից սրաիւ, քանի՞օն ուրախութեամբ ընդունեցանք Մեծարոյ Եղբայրները՝ Հայ Եպիսկոպոսներն, ինչպէս նաեւ իրենց և ձեր Պատրիարքը, որուն բազմաթիւ առաքինութիւններն, և հաւաստոյ յոյժ անկեղծագոյն սէրը ծանօթ են Մեզի, որոնք Մեր Մայր քաղաքին մէջ Առաքելական Աթոռոյ անմիջնորդական պաշտպանութեան և խնամոց տակ ընդհանրական Սինոդ կազմելու գումարուած էին։ Վասն զի անոնց փարելու ժամանակ կը նկատէինք ոչ միայն Մեր Մեծարոյ Եղբայրներն խանդաղատանօք Մեր գիրկն ընդունիլ, այլ և զձեզ ամէն կաթողին որդիներն, այսինքն համօրէն Հայ կաթողիկէները։ Պատմութիւնը բազմաթիւ յիշատակարաններով կը վկայէ, որ Մեր Նախորդներն սոյն աղնուագոյն ազգն ու ցեղը միշտ իրենց սրաին մէջ կրած են։ Թող բաւական ըլլայ, զանց առնելով հնագոյն Քահանայապետները, որոնք հովանի և նեցուկ եղան ձեր մեծապայծառ ազգին Առաքելոյն Սրբոյն Գրիգորի, որուն արժանաւորապէս Լուսաւորիչ անունը տրուեցաւ, յիշեցընել Գրիգոր ԺԳ., Ուրբանոս Ը., Բենեդիկտոս ԺԳ., Լեւոն ԺԲ., Պիոս Ը., Պիոս Թ., Լեւոն ԺԳ., որոնք ամէնքը ձեր ցեղին և ազգին համար, այնչափ բարի բարի արժանիքներ չտուցան։ Նոյն ազգը Մենք ալ գերագոյն չափով կը սիրենք և Մեր սրտին կը ճնշենք, յիշելով մանաւանդ այն չարքիները զորոնք վերջերս կրեցիք։ Անոր համար ցնծալից սրաիւ տեսանք և զրուատեցինք այն եռանդն և աշխատութիւնը, զոր Սինոդա-

կան Հարք Աստուծոյ փառաց և ձեր օգտին համար յանձն առին: Եւ արդարեւ որպէս զի այնչափ աշխատութիւններ ի զուր և ի նանիր վատնուած չըլլան, հարկաւոր է ստուգիլ՝ որ որդւոց հլութիւնը համապատասխանէ Հարց ուշադիր ջանքին: Ուստի ձեր Պատրիարքին և Եպիսկոպոսաց շնորհակալ ըլլալէն ետեւ՝ ձեր օգտին համար յանձն առած աշխատութեան համար, հարկաւոր կը նկատենք ուղղել Մեր խօսքերը ձեզի, ամենասիրելի որդիք:

Եւ նախ՝ կ'ուզենք յորդորել զձեզ ի մեծագոյն սէր Հաւատոյ: Վաղըն զի հաւատով կը յարինք Աստուծոյ և Անոր կը մատուցանենք մեծագոյն հնազանդութիւն պարտաւոր հպատակութեան, սիրով կերպաւորեալ հաւատով կը միանանք Աստուծոյ հետ և անոր կեանքը կ'ապրինք: Ուստի կը յորդորենք, որ այն հաւատքը, զոր ձեր Պատրիարքներն ու նախնիքը՝ յաղթահարելով այնչափ վտանգները, տոկալով այնչափ նեղութիւններու, ամենաթանկագին ժառանգութիւն ձեզ աւանդեցին, իբրեւ ամենամեծ առ հաւատչեալ փրկութեան, ձեր սրտին մէջ միշտ պլինդ բռնէք, գործելով խոստովանիք և վրան գորովիք: Սոյն այս ճշմարիտ հաւատով, որ մի միակ է, ինչպէս որ միակ է Եկեղեցին, պիտի միաւորինք Քրիստոսի՝ և Անոր հարսին հետ, զոր նա ինքն իրեն յանդիման կացոյց փառաւոր, որ արատ չունենայ կամ աղտեղութիւն, հապա ըլլա սուրբ՝ և անարատ (Եփես. Ե. 27.):

Պահելով հաւատքը՝ մշակեցէք նոյնպէս հնազանդութիւնը, որպէս զի միաժամանակ անարատ պահէք հաւատոյ միութիւնը ու վարչութեան միութիւնը, որոնցմէ՝ Քրիստոս կազմեց ի մի իւր Եկեղեցին: Ուստի հնազանդեցէք նախ այս Առաքելական Աթոռոյն, զոր Տէրն դրաւ հիմն և վէմ իւր Եկեղեցւոյն. մի՛ բնաւ մոռնաք Մեր նախորդին Լեւոնի ԺԳ. խօսքերը, որ նոյն իսկ ձեզի զրկելով կ'ըսէր. «Պատմութիւնը կը վկայէ որ Հայաստանեայց սուրբ հայրապետներուն մէջէն անոնք աւելի փալեցան միւսներէն, իբրեւ պաղպաջուն աստղեր, որոնք Հոռովմէական Եկեղեցւոյ անձկագոյնս յարեցան, և այն դարերու մէջ առաւել մեծագոյն էր ազգին փառքը, երբ Հաղպին մէջ կաթողիկէ կրօնն աւելի ընդարձակագոյն ծաղկեցաւ:» Անոր համար հնազանդեցէք ձեր առաջնորդներուն և անոնց հպատակ կացէք: Վասն զի անոնք կը տքնին, իբրեւ թէ ձեր հոգիներուն համարը պիտի տան, որպէս զի խնդութեամբ կատարեն զայն և ոչ թէ հառաչելով, վասն զի ասիկա ձեզի օգտակար չէ (Երր. ԺԳ.): Ուստի դանոնք որ քիչ օրէն ձեզի պիտի վերադառնան, ընդունեցէք իբրեւ հրեշտակներ, որոնք այս անգ նոյն իսկ աղբիւրէն առին ճշմարտութիւնն և ձեզի կուգան, որպէս զի ձեր հոգիները փրկութեան խօսքերով և սուրբ գործերով առ Քրիստոս առաջնորդեն: «Վասն զի պատշաճ է՝ ինչպէս արդէն Սուրբ Կղեմէս՝ կը խօսէր Կորնթացւոց, խոնարհեցնել վիզը, և ուր պէտք է հնազանդելով՝ խոնարհիլ անոնց առջև, որոնք մեր հոգիներուն

առաջնորդներն են, և դադրելով վայրապար երկարաակութենէ՝ հասնինք բոլորովին անստգիւտ այն նպատակին, զոր մենք մեղի ճշմարտութեամբ որոշեցինք»։ Եւ արդարեւ, ինչպէս որ Իգնատիոս վկայ առ Փիլադելփացիս կը գրէր «Որոնք որ Աստուծոյ և Յիսուսի Բրիստոսի են, անոնք Եպիսկոպոսին հետ են...։ Մի՛ սխալիք, Եղբարք իմ, ով որ հերձուած յարուցանողին կը հետեւի, Աստուծոյ արքայութեան ժառանգութեան չի հասնիր»։

Սիրեցէք ձեր հայրենիքը և հայրենաստուր սոգգային փառքերը, վասն զի մարդկեղէն իրաց մէջ հայրենասիրութենէ ազնուագոյն բան չկայ։ Բայց ըստ Աստուծոյ սիրեցէք հայրենիքը, վասն զի ամէն բանէ աւելի զինքը պէտք է սիրել, և ով որ չի սիրեր զԱստուծո, ճշմարտապէս չի սիրեր նաեւ հայրենիքը, և անոր անբիծ և ճշմարտագոյն փառքերն առ ուն կը կոխէ և կ'ապականէ։

Նոյնպէս ձեր մէջ փոխադարձ սէր ունեցէք, այնպէս որ ամէնքդ ըլլաք, համամիտ, համակարիք, եղբայրասէրք, ազնուագութիւնք, խոնարհք, չարի փոխարէն չար չհասուցանել, և ոչ բամբաստանք բամբասանաց փոխարէն, այլ ընդ հակառակն օրհնել, վասն զի առ այն կոչուած էք, որ օրհնութիւնը ժառանգէք (Ա. Պետր. Գ. 9)։ Սիրոյ սոյն ընդհանրականութենէ մի՛ արտաքսէք զանոնք, զորոնք Մեզմէ և ձեր հասարակութիւնէն բաժնած է մոլորութիւնը, մանաւանդ թէ ձեր վտրքն անոնց մէջ պարկեշտ ցոյց տուէք (Ա. Պետր. Բ. 12), և օրինակաւ առ ձեզ ձգեցէք և աղօթիւք օգնեցէք, որպէս զի իրենց մոլորութիւնը ճանչնալով վերադառնան կաթողութիւնէ միութեան։

Եթէ դուք անոնց հետամուտ ըլլաք, վստահ ենք որ ձեր Պատրիարքին և Եպիսկոպոսներուն ստանձնած զործն իւր ուրախական և առատ պըտուղներն յառաջ կը բերէ, որոնց մէջէն աւելի ցանկալին այն է՝ որ ձեր ազնուագոյն Եկեղեցւոյն նոր վայելչութիւն մը աւելնայ ու փառքը պայծառագոյն աճի։ Եւ ասոր առաւել եւս կը ցանկանք ձեր հոյակապ աղգին և ցեղին ազնուութեան և բարւոյն համար, զոր Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի բուռն նեղութիւններն երբեմն սրբացուցին, և Մարտիրոսաց արիւնն ու Սուրբերուն նշանաւոր առաքինութիւնները պողպարեւ դործեցին։

Արդ այս ամէնը, զոր ընդհանրապէս հաւատացելոց կը յանձնարարենք, յայտնի է որ առանձին կերպով ձեզ, Սիրեցեալ Քահանայք, կը հային, վասն զի դուք սրբազան նուիրապետութեան մէջ առաւել կապակցութեան մէջ էք ձեր առաջնորդներուն հետ, և հետեւաբար պարտական էք մանաւանդ հնազանդութիւն ցոյց տալ անոնց, և ամենածանր պաշտօն ունիք բոլոր առաքինութիւններով առաւել չողջողիլու հաւատացելոց առջև, որպէս զի ոչ թէ միայն ձեր խօսքերով, այլ և գործերով և օրինակներով աւելի աղղուաբար հաւատացեալներն յորդորուին։ Եւ որովհետեւ մարդիկ սովոր են իրենց հայեցուածքը դարձնել անոնց որոնք բար-

ձրաւանդակ տեղ մը դրուած են, որպէս զի անոնց օրինակին համեմատ կազմեն իրենց կենցաղավարութեան կերպը, յայտնի է ամէնուն, որ անոնք քահանայից ամենասուրբ օրինակներովն առ առաքինութիւն կը բարբոքին և կը բոցավառին :

Եւ որպէս զի այս դուռն ելլէ առաւել յաշտութեամբ, բոլոր սրտէ կը խնդրենք Աստուծոյ լիութիւն շնորհք, և մայրական օգնութիւնը Ամենասուրբ Կուսին, որուն հանդէպ ձեր ցեղը միշտ առանձնակի սէր կը տածէ, և Մեր բարեացակամութեան ի վկայութիւն՝ խանդավաղաթ սիրով կու տանք ձեր ամէնուն, Սիրեցեալ Որդեակք, Առաքելական Օրհնութիւն :
Ի Վատիկանեան Պալատան 22 Դեկտ. 1911 .

ՊԻՈՍ Ժ . ԲԱՆԱՆԱԹԱՊԵՏ



ՄԻՆՈՂԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Սրբազան Բահանայապետին մանաւոր արամադրութեամբ ի Հռովմ գումարուած Աղգալին Պատրիարքական Սիւնհոգոսը, մեր կաթողիկէ հասարակութեան համար միանգամ ընդ միշտ Ս . Աթոռէն հաստատուած տնայելի եկեղեցական օրէնքներ սահմանելու աշխատելով հանդերձ, չմոռցաւ ի նկատի առնուլ հասարակութեանս, մանաւանդ Պոլսոյ ժողովրդականաց ոմանց կողմանէ յարուցուած վէճերը : Եւ ինչպէ՞ս կրնար անտես ընել այնպիսի սննտախնդրեաց դէպք մը որ մեր եկեղեցական թէ՛ աշխարհային կազմակերպութիւնը վեր ի վայր փոխելու յաւակնութիւնն ունէր, բարենորոգումի կամ կանոնաւորելու ոսկեզօծ անուան ներքեւ : Դրացի հասարակութեանց օրինակին հետեւելով կամ մինչեւ իսկ դանցսանելով, կը փութաքուէր, այլ և այլ ազդեցութեանց ներքեւ, տիրել եկեղեցականութեան վրայ և գործել : Սինոդոսը կոչում ունէր այսքան մեծ ազդեցիկ մը պատուար կենալ . Սրբազան Հօրմէն դրուատուած իր աշխատութեանց մէջ պատրաստեց նաեւ երկու համակներ . առաջինը խնդրոյն վարդապետական կողմը կ'ուսումնասիրէ, իսկ երկրորդը պատմականը կը պարզէ : Այս համակները, իրենց թարգմանութիւններովն՝ խանդերձ ամէն կողմ յրուած ըլլալով, մենք, այս անգամ, չենք ուզեր անոնց վրայ հետազօ-

տութիւն մը կատարել, այլ միայն անցողակի պիտի նկատենք անոնց արգիւնքը: Յուսայի էր յիշաւի որ արդիւնաւոր դառնային այս հաւաքական և հայրական թղթերն, որոնք պաշտօնական և գերազանցաբար վարդապետական յայտարարութիւնն են հայկոսոսաց, ո՛չ միայն իբր առանձնականաց, այլ Հոգւով Սրբով ի Սիւնոդոս զուգարեոց, որոնց մէջ կը գտնուէր Քրիստոս բոտ իւր անսուտ խոստման, — մեր խօսքերը հաւատացեալներու համար են, — և որոնք պաշտօն ունին կղերին և հաւատացեալներուն ստովեցնելու ճշմարտութիւնն զոր «նոյն իսկ աղբիւրէն Հոգովն առին», և որոնց կղեր և ժողովուրդ պարաք ունին հնազանդելու: Այս նամակներն յայտարարութիւն են այն նուիրական մարմնոյն որ մեր հաւարակութեան վերին Աստեանը քարոզուեցաւ, ըսել է՝ վճռաբեկ և վճռասու, ըսել է՝ անբողոքելի, եթէ ոչ, ըստ ուղիղ մտաց, առ Ս. Աթոռն միայն: Այս երկու թուղթերը՝ կ'ըսեմ, պէտք էր մարէին ամէն գծաւովեան հրդեհ և վերադարձէին այլ եւս յոյժ ցանկալի խաղաղութիւնը: Հարկ է սակայն խոստովանել որ ուղղամիտներն առ հոսարակ սխալեցան անոնց ընթերցումով և ետ կեցան իրենց անգիտակցօրէն յառաջ վարած անիրաւ պայքարէն: Այս արդիւնքը արդէն մեծ գոհունակութեամբ արժանի է: Բայց կ'երեւի թէ սմանք, սկզբանց նկատմամբ խնդրոյն անխոցելի ըլլալուն թափանցելով, և վիճելու հաճոյքէն չուզելով զրկուիլ, խնդիրը անձնականութեան յանգեցուցին, Ամենապ. Կաթողիկոս-Պատրիարքին հրաժարեցումը ոչ միայն այլ և հրաժարականը խնդրելով — երկուքն ալ ապօրինի: Սրբազան Գահանայապետին դիմուեցաւ — կրկնակի. և հնազանդութեան պարաքը հայրաբար յիշեցուց նա, և առ այն խրատեց: ո՛վ կրնար ուրեմն — իբրեւ թէ ի պաշտօնէ — պահանջել կաթողիկոսի մը հրաժարականը: Եւ ոչ իսկ իբրեւ Պապիւս (բաթրիք). քանզի Օսմանեան կառավարութեան եւս դիմուած էր, և այն կը յայտարարէր թէ զինքը կը ֆանդաթ Բալթի: Ուրեմն չկար իհարկու խորհուրդ և ուղղութիւն այս ամէնուն մէջ, եթէ ոչ կէր և հակառակութեան ոգի որ կը գործէր հաւարակութեանս ամենախորք հատուածի մը մէջ, առանց եկեղեցականութեան, առանց օրինաւոր կազմակերպութեան, երկդիմի ազդեցութեանց զոհ, և առանց կարծիս անգրագաւանալու թէ այսպիսի յախուեն փոփոխութիւն մը առօգոս է ամենեւին, զի կաթողիկէ ո՛ր է հայկոսոսաց կամ եկեղեցական ստիպուած է ի խղճէ և անհրաժեշտոյն սկզբանց հետեւիլ: Այս պարագաներու մէջ ճշմարիտ կաթողիկեայց կը մնայ հնազանդիլ, իսկ եթէ ոչ, այն տունն յայտնի է ո՛ր պիտի ոգի է որ կը դրդէ, որպիսի եկամուտ մոլորութիւն է որ կը շարժէ. այն ատեն յետինն կ'ըլլայ «չար քան զառաջինն»: այն ատեն «խորք խորոց կարդան»: այն ատեն կ'ըլլայ հաւասարի և հոգեոց կորուստ անգարմանելի: Ասոր համար է որ կը յանդգնուի օրինաւոր Հայրապետին յիշատակութիւնն արգելուլ ի Սուրբ Պատարագի. անոր եկեղեցական ան-

հրաժեշտ պատուանդանները փոխել. անոր անուան վրայ անպատմկի նախատինքներով յարձակիլ և գրաւորապէս շատ թերթերու մէջ, և իբր կաթողիկէ թերթ և.ս պարծելով, վարկաբեկի վայն, իբր ազգատեսաց, ստախոս, նենգադաւ, յախշտակիչ և յիմար: Սրբազան Քահանայապետէն ճանչցուած հայրապետ մը այսպէ՛ս ուրանալ: Ապա կը դիմուի — յանդա-տիժո — այլ և այլ չափադանցութեանց և սուտերու այդ թերթերու մէջ. այո՛, բացայայտ սուտերու, անհիմն ենթադրութիւններու, ամօթալի կեղծիքներու, և այս ամէնը՝ առանց տատաւանելու, և այս ամէնը՝ յա-նուն ճշմարիտ կաթողիկէութեան!! և ասոնց հակառակ եթէ Քճմարտու-թիւնն ըսուի կամ գրուի, մէկ հատ փոխանակ հագարի, ահա դատա-պարտուած էք: Այո՛ կը դատապարտուիք անոր համար որ օրինաւոր կաթողիկոսին կը հնազանդիք, պարսականութիւննիդ կը կատարէք. անձնական կարծիքի և սրբազան սկզբունքի ահագին խտրոյցը կը ճանչ-նաք, ուստի և կը նախատուիք, կը բամբասուիք, կը զրպարտուիք, անխղճօրէն և վատօրէն: Ասոնք որպիսի՞ ոգւոյ ձնունդ են. այս է կա-թողիկէութիւն, Եկեղեցի, Քրիստոս...

Եւ այսքան տալօրինութեանց պատճառն, այսինքն վերագրուած այն-քան յանցանքներն, վերջ ի վերջոյ կը վերածուին ափ մը աճիւնի, իբ-րեւ Քսէրքսէսի բանակը: Մարդ կը զարմանայ և կը ցաւի, օրինակի համար, այն անխմատ թեթեւամտութեան որով չարադրուած է Հռովմէն և 300 միլիոնի կաթողիկէ աշխարհէն ճանչցուած, գնահատուած և յար-գուած կաթողիկոս-Պատրիարք մը պաշտօնանկ ընել տալու ինդրանքը. տրամաբանութիւն, ուղղամտութիւն, չեմ ըսեր իմաստութիւն, այլ պարզ դատողութիւն իսկ կը փայլին իրենց բացակայութեամբ: Բաւական է վեր ի վերոյ ակնարկ մը միայն նկատել Ոսկեբերանի բակէն առ Եպարքոն զարնուած տխրահնչակ հեռադրին վրայ. որպիսի տղայական իմաստներ, որքան անհետեւող կցկցանք, որչա՛փ ակն յայտնի չարամիտ յերկրանք: Կ'ուզենք հոս՝ համառօտիւ քննութեան քուրայէն անցունել յառաջ բեր-ուած պանծալի պատճառները: Առաջին պատճառ. «ոչարդ-թիւն և օրէնք սնհրամեշտ կը ստիպեն եղեր ի Պոլիս միայն Սիւնոդոս գումարել. ո՞ր օրէնքն է այդ և ո՞ր սովորութիւն, այսքան անփոփոխելի, մինչեւ իսկ Պատրիարքի համար պաշտօնանկութեան առաջին հօժիքը կազմէ. ուրեմն տեղեակ չե՞ն պատմութեան, որ՝ ի Զմմառ, նաեւ ի Հռովմ Հայ կաթողի-կէ Սինոդոսներ գումարուած են ուրիշ անգամ. իսկ օրէնքը կը ստիպենէ թէ՛սուր որ նախագահ կաթողիկոսն ուզէ, կարող է գումարել: Երկրորդ պատճառ. Սինոդը գումարուեր է եղեր Բլնամոյ երկրին մէջ: Կ'ուզեն ուրեմն հապնել զՊատրիարք ի ձեռս դատաւորի. բայց պէտք էր ամէնայ-քանզի այն դատաւորը, թէեւ ո՛չ կաթողիկէ և ո՛չ քրիստոնեայ է, աւելի ուշիմ և արդար է, և ինքը իւր դատողութեամբ ոչ միայն յանցանք չվերագրեր վայս, այլ և քաղաքագիտօրէն կը յայտարարէ թէ Սրբ. Պա-

ային Հռովմը բոլորովին տարբեր հող է Իտալիոյ հողէն և թէ կաթողիկէ եպիսկոպոսներ որ ի Վատիկան կ'երթան, Քահանայապետին հողը կ'երթան և ոչ Իտալիոյ, և թէ ապա էն միջազգային Երաշխասորո-վեան օրէնքներով (lois de garantie): Երբորդեւ ապա՞ն. Եպիսկոպոսաց ընտրութիւնը կատարուեր է առանց ժողովրդական բարի վկայութեան: Առանց նախորդող մը Սրբ. Պապին կողմանէ մէկ անգամ բացառաբար դադարումը Կաթողիկոս-Պատրիարքի մը պաշտօնանկութիւնը կը ծնանի եղեր!! մինչդեռ Օսմանեան կառավարութիւնը շատ շատ միայն իբր Մէրիտաս ֆէրման տուլու կնճիւ պիտի հանէր, զոր և չ'ըներ այնպէս՝ ինչպէս — ի վնաս այնչափ թեմերու — կը յուսային և կը փափաքէին և ընկ կը համոզէին մեր ազգայնէրները!!: Զորբորդեւ ապա՞ն, պատմական ծիծաղելի պատկերով և ներկայ գործոց կամակոր խարդախանօք յերկրեայ ամենամանիւսատ յօդուած մը: Կը հարցնեմք. Réversurus խօսքը ո՞ր կից մտաւ հոս... հա՞, կառավարութիւնը խրաչկոնկու և գրգռելու համար քառասունէ աւելի տարիներ քիչ թէ շատ փոփոխ ձայնի ելուէջով մերթ ընդ մերթ մէջտեղ նետուող վախճունելու և մասնելու նշանաբանը!! բայց կառավարութիւնը լաւ հասկցած է իրականութիւնը և այս Լաֆլէթին հօրան ալ եւս անցած է... Հինգերորդ ապա՞ն. կեղծիքի խառնուրդ մը. ա) Ալիսոյ ստացուածոց խօսքը ընկ կ'ուզէ, բայց ազգի ընդհանուր անունով կը քօղարկէ. բ) յարաբերական գործերը կը խառնէ յանդէպս. գ) Նիկաճաճէ երկզիմի բառը կը նետէ մէջտեղ. դ) Իրարէ Մէճլէի ջնջեր է եղեր Պատրիարքը: Արդ՝ ա) կառավարութիւնը գիտէ և կը հաւատէ թէ Աթոռոյ ըսուած ստացուածներու մասակարարութիւնն ու հակակիւրը, ըստ կաթողիկէ սկզբանց, անձեռնմխելի է. բ) յարաբերական գործոց պատասխանատուն Կ. Պատրիարքն է. գ) կառավարութիւնը բացարձակապէս չէ Դերժէ կանոնադրի մը գոյութիւնը. դ) «ո» է վարչական ժողովոյ — իբրեւ այն — ջնջումը: Վեցերորդ և վեցձիւն ապա՞ն. Կ. Պատրիարքը ջնջեր է եղեր նաեւ Մեթոլիկոս Մեթոլի Մեթոլի. ահա յայտնի ստութիւն և չարակամութիւն. Կաթողիկոս-Պատրիարքը յարոհակ հաստատած է — բերանացի և գրաւորապէս — թէ կը ճանչնայ միայն Մեթոլիկոս Մեթոլի մը ըստ կայսերական ֆէրմաններու. այլ կը ջնջէ ԵՐԵՄՈՒՄԱՆԱԿԱՆ ըսուած ժողովը՝ ընտրուած ընդհանրութեան քուէով, զոր ֆէրմանները բնաւ չեն ճանչնար: Հետաքրքիր էինք գիտնալ թէ ինչո՞ւ այս գերահռչակ հեռագրին մտայի հեղինակները ա) բացայայտ կը զրաւարէն իրենց օրինաւոր Կ. Պատրիարքը և կը մասնեն կառավարութեան, բ) ինչո՞ւ իրերը իրենց անունովը չեն ըսեր (dire les choses par leurs noms). ինչո՞ւ Երեմիոսիանիան ժողով բառը զոր միշտ իբր նուիրագործեայ գուրգուրանք կը գործածեն, և ոչ իսկ կ'անուանեն կառավարութեան մօտ. կ'երեւի թէ իրենք ալ վերջ ի վերջոյ գիտցան թէ Օսմանեան կառավարու-

թիւնը կաթողիկէ հասարակութեան մէջ ընտւ երբէք չ'ընդունիր Երեսփոխանական ժողովի մը գոյութիւնը, որ կը հակառակի նաեւ կաթողիկէ սկզբանց:

Ահա այսպիսի ծայրայեղութիւններու միջոցաւ ոմանք կիրքերը այն աստիճան գերազգուեցին, որ՝ անպարտաճանաչ խումբ մը, — որուն դժբախտաբար կաթողիկէ Ժողովո՛րդի անուն տրուեցաւ, — քանի մը աւելի անպարտաճանաչ երեսփոխան ըսուածներէն գրգռուած, ժպրհեցաւ ո՛չ միայն կրօնական այլ և տարրական քաղաքավարութեան սկզբունքներու հակառակ ցոյցեր ընել: Հռովմէն և Օսմ. կառավարութենէն ճանչցուած օրինաւոր Կաթողիկոսի և Պատրիարքի մը վրայ յարձակիլ, անիծել, թքանել!! պատմութեան մէջ աննշմելի կեղտ մը! ա՛յնչափ գարշելի, որ իրենք իսկ ամչնալով, և կարելի է Հրէից համար Ս. Շնորհալուոյն Աստուծոյ օծեալին դէմ «թուք արձակեալ...» դառն արտունջը յիշելով, յետոյ այս գործը կը վերագրէին եկամուտ կուսակցականներու... Ապա նոյն Կաթողիկոս-Պատրիարքի գալստենէն անմիջապէս քանի մը ժամ վերջը, ժողովական պատուիրակութիւն անունով, մի քանի հոգի վազեցին անոր հրաժարականը ուղելու — և ինչ քաղաքավարական!! չարժուծեւերով և փափկանկաւ!! խօսքերով որոնք պատիւ կը բերէին իրենց!!! — ապա փողոցի և եկեղեցեաց բակերուն մէջ անէծքներով և աղաղակներով ցոյցեր... Այս խումբին անորակիլի արարքները Օսմ. կառավարութիւնը յանուն օրինաց և պարկեշտութեան կը ստիպուէր արգելել: Ամօթ՝ նախատանաց. ո՛չ մէկ ազգ իր հոգեւորական պետին ըրած ունի այսպիսի խայտառակութիւն. եղանք «Այսին կատականաց դրացեաց մերոց», «Եթէ թշնամեոյն նախատեալ էր!...» «Որ դձեզ անարգէ զիս անարգէ!!»: Ո՛վ ճշմարիտ կաթողիկէ հաւատացեալք, ի՞նչ կ'ըսէք. «Ի պաղոյնոցս ծանիշիք զնոսա»:

Այո՛, դառն պտուղներ յառաջ եկան: Անոնք որ կը դաւանին թէ Սրբ. Բահանայադիւտին հնազանդ են, Անոր ճանչցած և հնազանդութիւն հրամայած Կաթողիկոս-Պատրիարքը կը մերժեն և հրաժարեցնել կը ճգնին: Իրենց կուսակից եղողներէն ոմանք — բարեբախտաբար սակաւաթիւ — հակակրօն գաղափարներ կը քարոզեն, «բո-գոսայէ», նոյն իսկ տուններու մէջ, առաջի կանսնց և տղայոց, ի մեծ գայթակղութիւն: Մինչեւ իսկ թերթի մը մէջ (Աղաթաճար թիւ 793), կաթողիկէ! անունի մը բացառապէս ստորագրութեամբ, յօդուած մը կը զրուի որ վերէն վար կրօնքի ամենասրբազան հաւատարիւսց դէմ ծաղրանք և հայհոյութիւն է: Իսկ իրենց կուսակից թերթեր բացայայտ կը հայհոյեն, և իրենք... կը լռեն և չեն հերքեր: Այս տեսակի հայ թերթերուն, որոնք սիրայօժար կը վերաբերուն մեզ կաթողիկէիցս վնասարեւ և անուանարկիչ ո՛ր և իցէ խնդիրներուն, զործածած նախատական բառերուն ու ոճերուն անհասնում մթերքը մէկդի թողլով, կը բաւականանանք յիշելով երկու հատը միայն:

Տաճար կրօնական թերթը, որ պարտք ունի գոնէ քրիստոնէական կրօն-
քի սրբազան սկզբունքները պաշտպանելու, իր 51-52 թիւ կրող տետրին
մէջ մասնաւոր յօդուածով անհարկի յարձակումով և անարգ լեզ-
ուով և սուտերով կը ծաղրարանէ կը ծանակէ՝ Ս. Քահանայապետը, Կա-
թողիկոսը, Պատրիարքը, Եպիսկոպոսները, կը ծաղրէ կը նշաւակէ նաեւ
Ս. Աւետարանը, քանի որ Եպիսկոպոսաց ի Հոգւոյն Սրբոյ կարգուած ըլ-
լալը կը ծաղրէ, ճիշդ սա բառերով. «Իրաւաւ Տարդ յիմար ըլլալու է
որ քահանայութեան հարկէն ինչպէս որ իրենց հարկէն ինչպէս որ իրենց հարկէն»
— Մարդ ապշահար կը մնայ կրօնականի մը!! գրչէն ելած այսքան ան-
հեղեղ և ստորին խօսքերու. կ'երեւի թէ ծածկեալ բանապաշտ մըն է, և
կաթողիկէութեան դէմ քննու մրուր կը ժայթքէ: Աւանդ, սրբախի պաշտ-
պաններ կրօնքի սրբութեանց... Եւ ինչպէս կ'ուզեն որ հայ ժողովուր-
դը չտուժէ իր կրօնքը...

Իսկ Ալապոստայի, դաւանաբար պայքարող ընդդէմ կրօնքի, այս
խնդրոյն մէջ ալ, ինչպէս միշտ, չի դադարի հայհոյելէ, նկրակով կաթողի-
կէութիւնը ոչնչացնել Հայոց մէջէն: Իր 780 թիւին խմբագրականին մէջ
գրած ունի, ի մէջ այլոց, հետեւեալ բացատրութիւնները. «Թէրզեան
կ'ուզէ իր անձը հոգեւորական, ասորի-ասորի հոգեւորական, ճիշդ այնպէս,
ինչպէս աշխարհի բոլոր եկող դասով բռնաւորները փորձած են... Այս-
պիսի ոսկեղօծ խաբէութիւններով հանրային կարծիքը մոլորեցնելու ժա-
մանակը անցած է... Կաթողիկոս կամ Պատրիարք, Առաջնորդ կամ քա-
րովիչ... կոչուած են հանրային ծառայութեան, իրրեւ պարզ սղախար-
կունները ժողովրդին: Եւ եթէ վերջապէս կայ կամք մը որ իրապէս կոչ-
ուի «Աստուածային» այդ ալ Ազգին ձայնն է»: Ահա ո՛ւր մնաց կամ գնաց
Աւետարան, Քրիստոս, կրօնք: Այսչափով գոհ չըլլար կը յարէ թէ ար-
ժանաւոր կաթողիկոս կամ կաթողիկոս այն է որ «Պիտի խոնարհի ժողո-
վրդապետական (démocratique) սկզբունքի առջև... կաթողիկ հա-
յերու և Թէրզեանի միջև մղուած պայքարը, ո՛չ անձի կուի է, ո՛չ ալ
ճշմարտապէս Պատրիարքական Աթոռոյ խնդիր: Իրողութիւնը ժողովրդ-
դապետական սկզբունքներու բազմութիւնն է եկեղեցական միասնամտութեան
հետ... կաթողիկ հայերու համար բարոյապէս, հաճոյսն ու իշխանի
պայքար է այդ»: Պէտք էր գիտնալ սակայն որ եթէ իրենց քով, իբր
զլիւնն բաժանեալ, հոգեւորք կայ, այլ կաթողիկէ սկզբունք չեն կրնար
յաղթուիլ ու մնանիլ:

Այսպիսի միջոցներով ու փաստաբաններով պաշտպանուած դատ
մը ի՞նչ կրնայ ըլլալ:

Սակայն ուրախ ենք յայտարարելու թէ մեր կաթողիկէ հառարա-
կութեան ահագին մեծամասնութիւնը այս ցաւալի գործերէն կը սիւսան.
Իսկ փոքրիկ մասին մէջ — որ ցարդ տարուած էր հոտանքէն — շատերը
սոյնգունակ ապօրինի ծայրայեղ սրդեանց առջև կարհուրած և սխալած

են . մենք ալ արդէն այս անկեղծ վախճանաւ նկարագրեցինք եղած չարիքն և ապօրինաւոր Հոփազանցութիւնները . և յուսանք որ մնացածներն ալ մաքերնին պիտի բերեն Յայտնութեան մէջ Գրիստօի Տեառն մերոյ խօսքերը . «Յիշեա՛ ուստի անկարն և ապաշաւեա՛» : Զի այսպէսով միայն օգտակարապէս պիտի ծառայեն խեղճ հասարակութեան և խզճի հանդարտութեամբ կատարած պիտի ըլլան իրենց ճշմարիտ կրօնասէր կաթողիկէի և աղգասէրի պարտականութիւնը :

Եւ այս է ահա Սինդական այն երկու գեղեցիկ նամակներուն դիտած վախճանը :



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՇԱՅՈՑ

Հայ էջմիածնականաց Աղգային Ժողովը որ անցեալ Ուրբաթ օր գումարուած էր, ընդ նախագահութեամբ Ամենապ. Արշարունի Պատրիարքին, աննախընթաց, և ցաւալի տեսարան մը պարզեց, պահ մը, Հայ Կաթողիկէայցս ներքին ամենածանր մէկ գործը իրենց վիճաբանութեան նիւթ ընելով : Առաջնորդող միտքը սակայն դիտումնաւոր էր . Հայ Կաթողիկէից մէջ ապստամբութիւնը գրգռել ցծայրայեղութիւն, որուն հետեւութիւններն կ'երևի թէ շահաւոր կը տեսնէին իրենց, ինչպէս որ մէջերնէն մէկը անխոհեմօրէն ունեցաւ գաղտնի պահուելիք Դոք Բանին արտայայտելու : Ապա թէ ոչ ինչպէս հնար է մեկնել այսքան յախուռն գործ մը Ժողովոյ մը կողմանէ որ իմաստութիւնը պէտք է առաջնորդ ունենայ, ուրիշ հասարակութեան ներքին գործերը բերել մայնել իր Օրակարգին . և եթէ Ատենապետը, քաղաքագէտն ու ծերակուտականը, թոյլ կուտայ այս օրինազանցութիւններուն, ինչո՞ւ արդեօք Ամեն . Պատրիարքն նախագահելով հանդերձ, կատարեալ լռութիւն կը պահէ այս անտեղիութեան հանդէպ, երբ ուրիշ հասարակութեան մը ՕՐԻՆԱԽՈՐ մէկ Պատրիարքը անվայել կերպով և պաշտօնապէս կը նախատուի իր առջև, երբ, մանուաւոր, Սրբազան Բանաստեղծութիւն Անձը, որուն հետ օսմանեան վիճ . Կայսրը կը թղթակցի իբրեւ վեհապետի մը հետ, որուն հետ Օսմանեան Կառավարութիւնը ամենալաւ յարաբերութեանց մէջ է, որուն հոգեւորապէս հրեալանդ ամենազգի միլիոնաւոր կաթողիկէայք կան Օսմանեան Պետու-

Թեան մէջ, որ կը հրամայէ 300 միլիոն կաթողիկեայց ընդ ամենայն աշխարհ, որ յարաբերութեան մէջ է ամէն վեհապետներու հետ, և որոնցմէ մեծարուած, որուն քով ամենամեծ Ինքնակայութիւնք Դեպաններ ունին, որուն անկողար և որդեակոն հնազանդութիւն կ'աղաղակեն նաև իրենց ողջունել ուզած հայ հոգեւորական Եղեայրեբէրէ . այո՛, այսպիսի անձնաւորութիւն մը հայոց ժողովին մէջ անվայելչօրէն կը նախատուի ընդդէմ քաղաքավարական և քաղաքագիտական կանոնաց:

Ո՛վ Կաթողիկեայ եղբարք, նախապինք մըն է Ձեզի համար այդպէս ողջունուիլ և այսպէս փառաւորուիլ և այսպէս հրաւիրուիլ . . . :

Մտածեցէք թէ ո՛ւր հասած էք:



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ւ Վ Մ

Սրբազան Քահանայապետը կատարեալ առողջութիւն կը վայելէ, եւ սովորական ընդունելութիւնները կը շնորհէ իւր ընդարդ Հայրական քաղցրութեամբ:

* Ս. Ծննդեան եւ ամանորոյ առթիւ Ս. Ք. Պիոս Ժ. արտաքոյ կարգի բազմաթիւ հեռագիրներ ընդունեցաւ բովանդակ աշխարհէ, մանաւանդ վեհապետներէ եւ իշխաններէ: Ի մէջ այլոց առանձնաբար իրենց մաղթանքները զրկած են հետեւեալ անձնաւորութիւնք:

Վեհափառ Սուլթան Մուհմէտ Ե. Կայսր Օսմանեանց.

- » Փրանկ. Յովսէփ Կայսր-Թագաւոր Աւստրիոյ-Հունգ.
- » Դուլիէլմոս Բ. Կայսր Դերմանիոյ.
- » Օսգար-Կուսթավ Ե. Թագաւոր Շուէտի.
- » Ալֆոնսոս ԺԴ. Թագաւոր Սպանիոյ.
- » Ալպէրթ Ա. Թագաւոր Բելգիոյ.
- » Փրետ. Աւգ. Ա. Թագաւոր Սաքսոնիոյ.
- » Հաագոն Է. Թագաւոր Նորվեկիոյ.
- » Նիգօլա Թագաւոր Մօնթէնէկրոյի.
- » Թագուհի Մարիա Բրիտանա.

Բարձրաւ. իշխան Լուիթօլտ Խնամակալ Պափիէրոյ:

* «Էքօ» թերթին մէջ սա յօդուածը տեսնուած է. «Ա. Աթոն ԵՒ ԹՈՒՐԳԻԱ» «Ն. Վ. ԶՕսմ. Սուլթանէն Ս. Քահանայապետին զրկուած բարեմաղթութիւնները մասնաւոր կարեւորութիւն մը ունին ներկայ պարագաներու մէջ: Անոնք իշխանապէս կը հաստատեն Քահանայապետին եւ Առաք. Աթոռոյ չէզոքութիւնը իտալեթուրք պատերազմին նկատմամբ: Յոյց ապառ. համար թէ Ս. Աթոռը այս վեճէն շատ բարձր եւ անկախ դիրք մը բռնած է Թուրքիոյ հանդէպ. արդարեւ պէտք չկար այս բարեմաղթութեանց, բայց եւ այնպէս ստոյգ է որ ապաժաման չեն անոնք չարամիտներու տարաւորութիւնն ալ յօդս ցնդեցնելու համար:»

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Գ-դդ:— Նոր Կարտինաներն՝ Ամթ, Դապրիէր եւ Տիւպիյար, ցնծալից ընդունելութիւն մը գտան երբ Հոռովմէն վերադարձան իրենց հօտին զուխը: Ո՛չ միայն հաւատացեալք, որոնց ծանօթ էին անոնց քաջարի եւ առաքինի վարքը եւ հովուական արժանաւորութիւնը, այլեւ անտարբերներ եւ հակառակորդք իսկ շնորհաւորեցին Ս. Քահանայապետէն ծիրանիով պատուեալ Վսեմաշուքները:

Ա-դդ:— Կաթողիկէութիւնը Անգլիոյ մէջ օրէ օր հսկայական քայլեր կ'առնու, նորանոր դարձերով, մանաւանդ բարձր եւ գիտնական դասակարգի մէջ: Կաթողիկէայք այլեւս միլիոններով կը հաշուուին հոն: Ս. Ք. Պիոս Ժ.ի պանծալի փառաց պսակին նոր փայլ մը եղաւ Անգլիոյ Կաթողիկէ Նուիրապետութեան Աթոռոց կարգաւորումը, ի զուխ ունենալով երեք Մետրապօլիտ. եւ Նախագահ Լօնտրայի—Ուէսմինսթրի—Կարդ. Արքեպիսկոպոսը:

Ս-դդ:— Թագաւորին աղջիկը որ ծնած էր վերջերս, սպանիական աւանդական ծէսերու համաձայն մեծ փառաւորութեամբ մկրտուեցաւ, անուն առնելով Իւֆ-Էլէ, Մ-Էլէ, Բ-Էլէ:

Հ Ա Յ Ե Ա Թ Ո Ղ Ի Կ Է Պ Ա Տ Ր Ի Ա Ր Դ Ա Ր Ա Ն

Ամեն. եւ Գերբը. Հոգեւոր Տէրն մեր, Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան, Ազգային Պատրիարքական Սինոդոսն աւարտելով ի Հոռովմ, վերադարձաւ ի Կ. Պոլիս, հետն ունենալով Արհի. Արքիարեան, Ռոքոսեան եւ Բէյէճեան Արքեպիսկոպոսներն:

— Թեմերէն եւ Եւրոպայէն բազմաթիւ հեռագիրներ եւ նամակներ հասան շնորհաւորելու իր գալուստը եւ եկեղեցւոյ օրինաց ի պաշտպանութիւն համբերատար արիութիւնը:

* Արհր. Անտոն Գեր. Պահապանեան, եպիսկոպոս Կեսարիոյ, մեկնեցաւ իւր Վիճակը, Անկիւրիոյ ճամբով: Ամենայն յաջողութիւն կը մաղթենք արի եւ համակրելի Առաջնորդին:

* Արհի. Յարութիւն Գեր. Բէքլիբեան, Վիճակաւոր Եպիսկոպոս Ատանոյ, մեծաւ փառաւորութեամբ ընդունուած է իւր թիմին մէջ: Մանրամասնութիւնները յառաջիկային: Նոյնպէս Գուգեան Արհի. Յովհան Եպիսկ. սիրով ընդունուած է յեզիպոսոս: Յոյց տրուած հակառակութիւնը Պոլսէն եղած զրգուրթեանց հետեւութիւնն է:

* Մարաշէն հասած է 400 ստորագրութիւն կրող հանրագիր մը որով մեծաբանք կը յայտնուի Վիճակաւոր Եպիսկոպոս Արհի. Արքիարեան Աւետիս Արքեպիսկոպոսին:

* Յառաջիկայ Մեծ Պահոց պահեցողութեան նկատմամբ կաթողիկոսական տրամադրութեանց եւ խրատուց կոնդակներն առաքուեցան Աւագ Թեմի բոլոր եկեղեցեաց:

* Գաղղիոյ Դեսպան Մ. Պօմբառ Յ փետրուարին մեկնեցաւ ի Դաղղիա, 15 աւուր արժակուրդով: Օր մը յառաջ Ամենուպ. Կ Պատրիարքն գնաց ի դեսպանատուն զինքը մեծարելու: Մեկնումին օրը Ամինապ. Կ. Պատրիարքին կողմանէ Սիրբէճիյի կայարանը ողջերթի գնացին Կ. Պատրիարքական ֆոխանդը Արհի. Ռոքոսեան եւ Արհի Արքիարեան Արքեպիսկոպոսներ:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Էջի-Էլէ Կ-Էլէ-Էլէ ընտրութիւնը Ռուսիոյ կառավարութենէն չվաւերացուելու մասին զրոյցներ մը թէեւ կը շրջէին անպաշտօն շրջանակներու մէջ, բայց Կովկասէ եկած վերջին հեռագրերը նոյնը կը հաստատեն: Ռուսական Կառավարութիւնը, կ'ըսուի, նկատի

առնելով մէկ կողմէն ընտրութեանց պահուն եղած Երբեք, ու միւս կողմէն Սուրէն. եանց Արքեպիսկոպոսի կուսակցական հակում ունենալը՝ բեկած է ընտրութիւնը:

Սուրէնը դարձեալ բաւական հոգի ծերբակալած է Թիֆլիսի Հայերուն մէջ, իբրեւ համաստի Դաշնակցութեան:

Իբրեւ Դաշնակցական ամբաստանուած, եւ յետոյ դրամական երաշխաւորութեամբ արժակուած Հայերը Բեղերսպուրկ կը զրկուին հետգհետէ, չոր տեղի պիտի ունենայ անոնց դատաւարութիւնը:

Բերքի գերեզմանին շուրջ հանգամար մ'առած է վերջերս: Քաղաքապետութիւնը կ'սպառնայ ութ օրէն վիճել գերեզմանատան պատը, լքրամուտէյի ճամբան ընդլայնելու համար. եւ իբր վնասուց հատուցում 1700 ոսկի կ'առաջարկէ տալ:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Շէյխ Էւ Լուս Ապտիւրրահման Նէսիպ էֆ. Երկուշարթի (2 յունու.) Պոլիսի հասնելով մեծ շրով ընդունուեցաւ:

Սալ Երեսփոխանական ժողովը լուծելու համար տրուած կայսերական Իրատէն հետեւեալ կերպով յղացուած էր.

«Յարգելի Երեսփոխանաներ,

Զգացուած պէտքին վրայ, որոշած ըլլալով ներկայ Երեսփոխանական ժողովը ցրուել նոր ժողովը մինչեւ երեք ամիս ընտրելու եւ զումարելու՝ պայմանով, կը շղիմեմ Երեսփոխանին, ու Սահմանադրութեան 7րդ յօդուածին համաձայն՝ կը սպասեմ անոր հաւանութիւնը:»

25 Մուհարրէմ 1330

Մեհմեդ Բեյ

Յայտնի է թէ շատոնց ծրագրուած էր արդէն տոյն լուծումը կառավարութեան կողմէ, եւ իրօք ալ ծերակոյտը հաղորդեց նոյն Իրատէն Խորհրդարանին հինգ. 5 յունու.:

Ահա Խորհրդարանի ուղղուած լուծման Իրատէի պատճէնը.

«Հրամայեցի լուծել ներկայ Երեսփոխանական ժողովը՝ համաձայն Սահմանադրութեան 7րդ յօդուածին եւ հաւանութեամբ Երեսփոխանին. ու ընտրել եւ զումարել նոր Երեսփոխանական ժողովը՝ լուծման թուականէն սկսեալ երեք ամսուան մէջ:

«Վարչապետը պաշտօն ունի գործադրելու մեր ներկայ Իրատէն:»

Մեհմեդ Բեյ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Տեսութիւն Քահանայապետին բուլքին վրայ	1
Թուլք Ս. Ք. Պիոսի Ժ.ի	4
Սինոդական երկու նամակներ	7
Ընդհանուր ժողով Հայոց	13
Տեղեկագրական	14

Արտոնատէր

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



Տնօրէն Խմբագրատեղի

ԳԵՈՐԳ Ծ. ՎՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Ռ. ՏՍԱԿԱՆԱՆ

Կալաքա Քուրճուցի խան

